ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 3 - Լ

Լսելով Համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին հաղորդումը (զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ս. Գևորգյան)՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների կատարման գործընթացը համալսարանում գնահատել բավարար,
2. բարձրացնել գիտական գործունեության արդյունավետությունը՝ շարունակելով մասնակցել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված բազային և թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի մրցույթներին,
3. խրախուսել հատկապես միջազգային գիտական կառույցների հետ իրականացվող ծրագրերը,
4. նպաստել վերոնշյալ ծրագրերում մագիստրոսների, ասպիրանտների և հայցորդների գործուն մասնակցությունը,
5. նպաստել միջազգային գրախոսվող պարբերականներում բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ հրատարակմանը,
6. բարձրացնել բուհում կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումների որակը՝ ընդլայնելով առաջատար գիտնականների ներգրավումը վերապատրաստման գործընթացին:

Գիտխորհրդի նախագահ՝ **Ռուբեն Միրզախանյան**